ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵՀԴԻ ՀՈՍՍԵՅՆԻ ՆԱՎԵՀ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ (ՀՀ) ՄԻՋԵՎ

Ը.00.06 – «Միջազգային տնտեսագիտություն»
Մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ե Ր Ե Վ Ա Ն - 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թորոս Շահենի Թորոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Ներսիկի Հախվերդյան

տնտեսագիտության թեկնածու Էդգար Գագիկի Կարապետյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2019 թ. հուլիսի 16-ին, ժամը 14^{00}-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Տնտեսագիտության թիվ 008 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ 0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. հունիսի 07-ին:

008 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար **տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ի.Բ. Պետրոսյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: 21-րդ դարաշրջանը բնութագրվում է տնտեսական ինտեգրման նոր միտումներով, որտեղ շեշտադրվում են տարածաշրջանային ինտեգրման գործընթացները: Դրանց լավագույն օրինակներն են Եվրամիությունը (ԵՄ) և Հյուսիս Ատլանտյան Ազատ Առևտրի Համաձայնագիրը, որոնք առավել շատ ընդօրինակված ինտեգրման «մոդելներն» են այլ երկրների կողմից: Եվ բնական է, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը (ԻԻՀ) չի կարող դուրս մնալ համաշխարհային տնտեսությունում ընթացող նման գործընթացներից, հատկապես որ շատ տնտեսագետներ վստահ են, որ սոցիալ-տնտեսական քաղաքականության ոլորտում մի շարք նպատակային բարեփոխումներից հետո, այս երկիրը կարող է դառնալ համաշխարհային տնտեսության գերտնտեսություններից մեկը[1]: Նման գործընթացները պետք է իրականացնել երկրի տնտեսական դիրքերի աստիճանական ամրապնդմամբ, քանի որ տարածաշրջանում արդեն առկա են բավական հզոր տնտեսա-քաղաքական ուժեր, հանձինս Ռուսաստանի, Թուրքիայի ու Ամերիկայի Միացյալ Նահանգների (ԱՄՆ):

Մեկ այլ կարևոր փաստ, որը տարածաշրջանը դարձնում է առավել քան գրավիչ արտաքին ուժերի համար (բացի առկա էներգետիկ ռեսուրսներից), այն դրա աշխարհագրաքաղաքական դիրքն է՝ Մետաքսի ճանապարհը:

Այսօր, տարածաշրջանում ԻԻՀ չունի բացահայտ սահմանված նպատակ և առաջնահերթություններ: Իսկ եթե հաշվի առնենք, որ սահմանակից հիմնական հարևան երկրների հետ ԻԻՀ այնքան էլ «բարիդրացիական» հարաբերություններ չունի, ու դրանց հիմնական մասն արդեն ունեն հզոր քաղաքական գործընկեր և դիտարկվում են համաշխարհային շուկայում ԻԻՀ համար մրցակից, ապա ստեղծված նման տնտեսաքաղաքական իրավիճակում, հիմք ընդունելով ԻԻՀ տնտեսական զարգացման ու ռեսուրսների առկա ներուժը, Իրանին մնում է դառնալ տնտեսապես հզոր, որպեսզի կարողանա հակազդել այդ գործընթացների վրա, ու տարածաշրջանում իր վրա վերցնել այն դերը, որն իրականացնում է Գերմանիան Եվրամիության համար: Այդ տեսակետից այս աշխատանքի թիրախավորված երկրներն են ԻԻՀ-ի հյուսիսային սահմանակից երկրները՝ Ադրբեջանը, Թուրքմենստանը, Հայաստանը և Վրաստանը, որոնք դեռ չունեն զարգացած տնտեսություն և հզոր տնտեսությամբ աշխարհագրորեն մոտ հարևան երկրի կարիք ունեն, որը վերջիններիս տնտեսության աճի խթան կարող է լինել: Ահա, այստեղ է, որ Իրանը, ճիշտ տնտեսական

[1] Robert Baer «The Devil We Know: Dealing with the New Iranian Superpower». Crown Publishing Group. USA 2-13, ISBN 978-0-307-44978-8. Retrieved 14, էջ 35-77.

ռազմավարության դեպքում կվերածվի տարածաշրջանային, իսկ նաև հետո՝ համաշխարհային ուժեղ տնտեսական «խաղացող»:

Ուսումնասիրելով ԻԻՀ սահմանակից չորս երկրների բնական ռեսուրսները, փաստենք, որ Հայաստանը և Վրաստանը հարուստ չեն բնական ռեսուրսներով, այնինչ՝ Ադրբեջանն ու Թուրքմենստանը հարուստ են միայն նավթի ու գազի պաշարներով: Ավելին, հաշվի առնելով ԻԻՀ տնտեսության ներուժը, աշխարհաքաղաքական դիրքը ու պետության ջանքերն՝ ուղղված համաշխարհային տնտեսությունում երկրի տնտեսաքաղաքական դիրքերի բարձացմանը, ինչպես նաև տարածաշրջանում ստեղծված տնտեսական և քաղաքական անկայունությունը, տվյալ ատենախոսության թեման դառնում է առավել քան հրատապ ոչ միայն ԻԻՀ, այլև՝ տարածաշրջանի բոլոր երկրների համար:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է մշակել ԻԻՀ տնտեսական ինտեգրման հավանական այլընրտանքային մոդելը սահմանակից հյուսիսային հարևան երկրների հետ, ինչն ուղղված կլինի տարածաշրջանում Իրանի տնտեսական դիրքերի բարձրացմանը և ամրապնդմանը: Այս նպատակին հասնելու համար, առաջադրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել տնտեսական ինտեգրումը մեկնաբանող հիմնական տեսությունները ժամանակակից տեսանկյունից, ինչը հնարավորություն կտա մշակել հետազոտվող թեմայի համար տեսական հիմքը՝ տեղայնացված մոտեցմամբ,
- գնահատել տնտեսական ինտեգրման համաշխարհային փորձի առավել հաջողված օրինակները, ինչի հիման վրա կառաջարկվեն ներկայացվելիք տնտեսական ինտեգրման հիմնական գործընթացները,
- հաշվարկել ատենախոսության սուբյեկտ հանդիսացող երկրների բացահայտ համեմատական առավելության գործակիցները, որոնց օգնությամբ կձևավորվեն առաջարկվող տնտեսական ինտեգրման շրջանակներում մասնագիտացման հավանական ուղիները,
- մասնակի հավասարակշռության մոդելով գնահատել առաջարկվող տնտեսական ինտեգրման ազդեցությունը ու արդյունքները՝ վիճակագրական կանխատեսումների նպատակով,
- ձևավորել մի քանի հավանական տնտեսական ինտեգրման մոտեցումներ՝ ԻԻՀ դերը տարածաշրջանում գնահատելու համար,
- առաջարկել և ձևավորել տարածաշրջանային ինտեգրման գործընթացում ԻԻՀ տնտեսական դերի բարձրացման լավագույն այլընտրանքները:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը տարածաշրջանում տնտեսական ինտեգրման գործընթացներն են, իսկ առարկան՝ ԻԻՀ և դրան սահմանակից հյուսիսային հարևան երկրների հետ տնտեսական հարաբերությունները:

Ատենախոսության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար տեսական, տեղեկատվական ու մեթոդաբանական հիմք են հանդիսացել իրանցի, հայ և արտասահմանյան հայտնի տնտեսագետների տնտեսական ինտեգրմանն առընչվող գիտական մշակումներո ու հետազոտությունները, միջազգային տնտեսական կազմակերպությունների, Ադրբեջանի, Թուրքմենստանի, ԻԻՀ, Հայաստանի և Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությունների կողմից հրատարակվող վիճակագրական տվյալները ու վերլուծությունները:

Կիրառվել են վերլուծական և համադրման, քանակական ու որակական, ինչպես նաև մասնակի հավասարակշռության, գծապատկերային վերլուծության, տվյալների զանգվածների վիճակագրական վերլուծության և պատճառա-հետևանքային կապերը բացահայտող մոտեցումները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքներն ունեն տեսական, մեթոդական և կիրառական նշանակություն, որոնց գիտական նորույթներն արտացոլված են հետևյալ հիմնական դրույթներում.

- Ադրբեջանի, Թուրքմենստանի, ԻԻՀ, Հայաստանի ու Վրաստանի բացահայտ համեմատականության առավելության (ԲՀԱ) ցուցանիշների հաշվարկման միջոցով, մշակվել է տնտեսական համագործակցության մատրիցան, որը ցույց է տալիս թիրախավորված երկրների մասնագիտացման փոխշահավետ ոլորտները, և հիմք է ստեղծում տարածաշրջային մակարդակով քլասթերների ձևավորման համար,
- Համեմատական, քանակական ու որակական վերլուծության հիման վրա, առաջարկվել է փոխշահավետ տնտեսական ինտեգրման սխեմա, որը կանխագծում է ԻԻՀ կառավարության գործողությունների քայլերի հերթականությունը տարածաշրջանում տնտեսական առաջնորդության դերի ստանձնման նպատակով,
- Մասնակի հավասարակշռության (SMART – շուկայի անալիզի և առևտրի սահմանափակման ծրագրային ապահովում) մոդելի կիրառմամբ, բացահայտվել է տվյալ տարածաշրջանում ազատ առևտրի համակարգի ձևավորման ազդեցությունը Ադրբեջանի, Թուրքմենստանի, ԻԻՀ, Հայաստանի ու Վրաստանի տնտեսությունների վրա, և առաջարկվել են երկրների միջև տնտեսական համագործակցության հիմնական ուղղությունները:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Աշխատանքի արդյունքները կարող են ծառայել որպես տեսա-գործնական հիմք՝ ԻԻՀ տարածաշրջանային տնտեսական ինգեգրման գործընթացներին առընչվող հիմնախնդիրների դիտարկման ժամանակ, ինչպես նաև օգտագործվել արտաքին առևտրային քաղաքականության հայեցակարգային մոտեցումների

մշակման գործում, թե՛ հյուսիսային սահմանակից հարևան երկրների հետ, թե՛ համաշխարհային շուկայում: Ավելին, հաշվարկված ԲՀԱ ցուցանիշները կարող են ուղեցույց լինել Ադրբեջանի, Թուրքմենստանի, ԻԻՀ, Հայաստանի ու Վրաստանի առևտրային քաղաքականությունների մշակման համար և տարածաշրջանային առևտրի զարգացման գործում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումը: Հետազոտությունում տեղ գտած մոտեցումներն ու սկզբունքները քննարկվել են Երևանի պետական համալսարանի «Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների» ամբիոնում և Քերմանի Շահիդ Բահոնար համալսարանի «Միջազգային տնտեսագիտության» ֆակուլտետում: Հետազոտության արդյունքները դիտարկվել են Թեհրանի Արդյունաբերության, հումքի և գյուղատնտեսության առևտրական պալատում (http://en.tccim.ir/), Հայ-իրանական առևտրի պալատում (http://iranarmeniacc.org/), Իրանի առևտրի խթանման կազմակերպությունում, ինչպես նաև դրանք օգտակար կլինեն ատենախոսության մեջ դիտարկվող երկրների համապատասխան նախարարությունների կողմից հարևան երկրների առևտրային հարաբերությունների քաղաքականության մշակման ժամանակ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 6 գիտական հոդվածում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլխից, եզրակացությունների և առաջարկությունների բաժիններից, ինչպես նաև երկու հավելվածից ու գրականության ցանկից: Ատենախոսությունը ներառում է 6 գծապատկեր, 15 աղյուսակ, և 1 սխեմա: Ատենախոսության ծավալը կազմում է 138 էջ՝ ներառյալ գրականության ցանկը և հավելվածները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի ուսումնասիրվածության աստիճանը և այն ուսումնասիրած տնտեսագետների հիմնական մոտեցումները դրա վերաբերյալ: Ամրագրվել են նաև հետազոտության նպատակի, խնդիրների, առարկայի և օբյեկտի, ինչպես նաև աշխատանքի գիտական նորույթի վերաբերյալ մեկնաբանությունները: Բացի այդ, հեղինակի կողմից հստակեցվել է հետազոտության առարկան հանդիսացող տարածաշրջանային տնտեսական ինտեգրման հասկացության էությունը:

Ատենախոսության առաջին՝ «**Տնտեսական տարածաշրջանային ինտեգրման տեսական հիմքերը ժամանակակից տեսանկյունից**» գլխում, կատարվել է տարածաշրջանային տնտեսական ինտեգրման դասական և ժամանակակից տեսությունների համեմատական վերլուծություն, ինչպես նաև

գնահատվել է մի շարք երկրների ինտեգրման փորձը (մասնավորապես՝ Եվրամիության, Հյուսիս Ամերիկյան Ազատ առևտրային համաձայնագրի (ՀԱԱԱՀ) և Հարավ արևելյան ասիական ազգերի ասոցիացիայի), շեշտադրվել են այն առանցքները, որոնք առավել կիրառելի են հետազոտվող օրինակի համար:

Տնտեսական ինտեգրումը տնտեսական մի գործընթաց է, որի հիմնական նպատակն է երկու և ավելի երկրների միջև ազատականացնել առևտուրը: Այս գործընթացի տեսական հիմքերը և վերլուծությունը կատարվել է մի շարք հայտնի տնտեսագետների կողմից: Սկզբնական շրջանում այս հասկացությունը կիրառվում էր մասնավոր ընկերությունների միավորման համար, մասնավորապես, Է. Հեքշերի, Հ. Գաեդիքի, Գ. Վոն Էյերնի կողմից[2], սակայն արդեն Զ. Վիները, Բ. Բալասան ու Մ. Լինդերն այն սկսեցին կիրառել երկրների համար՝ տալով համապատասխան սահմանում և առանձնացնելով դրա զարգացման փուլերը:

Հետագայում նաև մշակվեցին տնտեսական ինտեգրման ազդեցությունը տնտեսությունների վրա հաշվարկող մոդելները, օրինակ՝ **գրավիտացիոնն ու մասնակի հավասարակշռությանը** (մասնավորապես՝ SMART-ի (շուկայի անալիզի և առևտրի սահմանափակման ծրագրային ապահովում), ինչպես նաև մի շարք ցուցանիշներ: Առավել դիտարկող ցուցանիշներից են.

ա. միջտարածաշրջանային առևտրի ինտեսիվության (որը հավասար է Tii/Tiw)/(Tiw/Tw), որտեղ Tii տվյալ երկրի ինտեգրված երկրների տնտեսությանն արտահանման ու ներմուծման գումար է, Tiw՝ տվյալ երկրի դեպի համաշխարհային շուկա համախառն արտահանման ու ներմուծման գումարն է, իսկ Tw՝ համաշխարհային արտահանման և ներմուծման գումարն է),

բ. բացահայտ համեմատական առավելության (որը հավասար է (Xcg/Xc)/(Xwg/Xw), որտեղ Xcg՝ g ապրանքի արտահանումն է c երկրի կողմից, Xc՝ c երկրի համախառն արտահանումն է, Xwg՝ g ապրանքի համաշխարհային արտահանումն է, իսկ Xw՝ համաշխարհային համախառն արտահանումն է)[3] և այլն, որոնք գնահատում են տնտեսական ինտեգրման հավանական ազդեցությունները ու մասնակից երկրների համագործակցության ներուժը:

Տնտեսական ինտեգրման գործընթացները նոր թափ ստացան 1980-ականներին, դառնալով բազմակողմանի, շեշտադրվեց համագործակցությունը

---

[2] Machlup, Fritz «A History of Thought on Economic Integration», USA, New York 1977. Columbia University Press. ISBN 0-231-04298-1, էջ 120-230.

[3] Revealed Comparative Advantage (RCA) Data Visualization, http://www.worldbank.org/en/news/video/2014/09/30/revealed-comparative-advantage-data: Այն նաև անվանում են Բալասսայի ցուցանիշ, որը մշակվել է Բ.Բալասսայի և Մ. Նոլանդի կողմից:

ոչ միայն արտաքին առևտրի ուղղությամբ, այլև՝ տնտեսական, քաղաքական, անվտանգության ու մշակութային ոլորտներում[4]:

Տնտեսագետների հետազոտությունների հիմնական մասը քննարկում է տնտեսագիտական ինտեգրման դրական կողմերը, սակայն ոմանք փաստում են նաև բացասական հետևանքները, որոնք վտանգում են պետության տնտեսական անկախությունը, ինտեգրված երկրների միջև տնտեսական փոփոխությունների փոխկախվածությունը և այլն:

Տնտեսական տեսանկյունից ինտեգրումը ենթադրում է ազգայինից անցում դեպի վերազգային և վերտարածաշրջանային ինստիտուտների, այսինքն՝ մի գործընթաց, որտեղ ազգային սահմաններն ինտեգրված մարմնի ներսում դառնում են արհեստական: Այսօր, միայն Եվրամիությունն է, որ առավել ինտեգրված է, և շարունակում է մնալ ինտեգրման դասական մոդելի կրիչը իր յոթ փուլերով՝ ապահովելով ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի ազատ տեղաշարժ միության ներսում, որն առաջարկվել էր Վ. Բալասայի կողմից[5]: Այդ իսկ պատճառով Եվրամիության օրինակը դիտարկվել է ատենախոսության շրջանակներում, սակայն առավել ուսանելի են ատենաախոսության նպատակի իրականացման համար Հյուսիս Ատլանտյան Ազատ Առևտրի Համաձայնագիրը և Հարավ արևելյան ասիական ազգերի ասոցիացիան, քանի որ վերջիններս մեկ կազմակերպության մեջ են ընդգրկել տնտեսական, սոցիալական և քաղաքական տարբեր շահեր ու զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներ, ինչը բնորոշ է աշխատանքում թիրախավորված տարածաշրջանի երկրների համար:

Առաջին գլխում կատարված գնահատումները փաստում են, որ ԻԻՀ ինտեգրման համար պետք է տեղայնացնել դրանք, քանի որ քննարկվող տարածաշրջանում առկա են խիստ արտահայտված տնտեսական, մշակութային, կրոնական և քաղաքական շահեր՝ երրորդ հզոր երկրների ներկայությամբ:

Ատենախոսության երկրորդ՝ «**ԻԻՀ և հյուսիսային հարևան երկրների հետ հավանական տնտեսական ինտեգրման հիմքերը**» գլխում, վերլուծվում են թիրախավորված երկրների տնտեսական հնարավորությունները, ինչպես նաև՝ հեղինակի կողմից հաշվարկվել են միջտարածաշրջանային առևտրի ինտեսիվության (ՄԱԻ) ու ԲՀԱ ցուցանիշները և առաջարկվող ինտեգրման գործընթացի տնտեսական հետևանքները մասնակից երկրների տնտեսությունների վրա՝ մասնակի հավասարակշռության (SMART) մոդելի միջոցով:

---

[4] De Lombaerd Philippe and Luk Van Langenhove «Indicators of Regional Integration». Conceptual and Methodoligical Issues, IIIS Discussion paper No.64, USA 2005: էջ 1-35.

[5] Balassa, B. “Theory of Economic Integration”; USA 1961, Richard D. Irwin, Inc., էջ 304

Աշխարհագրորեն, ԻԻՀ հյուսիսային սահմանակից երկրներն են Ադրբեջանը, Հայաստանը և Թուրքմենստանը: Ատենախոսության շրջանակներում ընդգրկվել է նաև Վրաստանը, հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանի միակ ելքը դեպի այլ երկրներ անցնում է այդ երկրով:

ԻԻՀ շարունակում է մնալ տարածաշրջանի ռեսուրսներով ամենահարուստ և քաղաքականապես ամենաբարդ երկիրը: 1979թ. կատարված հեղաշրջումից հետո այս երկիրը վերադարձավ թեոկրատական կառավարման համակարգին: Երկրի արտաքին տնտեսական ռազմավարության հիմքը կազմում են երկու առանցք՝ վերացնել արտաքին ազդեցությունը տարածաշրջանում, և զարգացնել դիվանագիտական հարաբերությունները զարգացող ու «չմիացած» երկրների հետ:

Ըստ Կենտրոնական հետախուզության գործակալության (www.cia.gov) ԻԻՀ–ի ՀՆԱ-ն ունի հետևյալ կառուցվածքն, արտահայտված տոկոսներով՝ գյուղատնտեսություն՝ 9.1, արդյունաբերություն՝ 39.9 և ծառայություններ՝ 51: Չնայած, որ Իրանի տնտեսությունը գտնվում է անցումային շրջանում՝ կենտրոնացված համակարգից դեպի շուկայական, տնտեսության ավելի քան 60 տոկոսը շարունակում է մնալ հանրային: Երկրի արդյունաբերության հիմնական ապրանքատեսակներն են. նավթը ու քիմիկատները, պարարտանյութերը ու կաուստիկ սոդան, գործվածքեղենը, ցեմենտը ու այլ շինարարական նյութերը, սննդի վերամշակման ոլորտը (մասնավորապես շաքարավազի վերամշակումը ու բուսական յուղի արտադրությունը), գունավոր մետաղները, և սպառազինությունը:

Երկրի գյուղատնտեսական հիմնական ապրանքներն են՝ ցորենը, բրինձը, գարին, կարտոֆիլը, ձավարեղենը, շաքարի ճակնդեղը, բամբակը, թարմ ու չոր մրգերը, պիստակը, ընկույզը, թռչնի միսը, կաթնամթերքը, բուրդը, խավիարը, ծաղիկները և բուժիչ բույսերը:

2016թ. Իրանի արտահանման արտադրանքներն են եղել. նավթը, որը կազմել է ողջ արտահանման 80%, որին հաջորդում են քիմիական և նավթաքիմիական արտադրանքը, մրգերը ու ընկույզները, գորգերը, ցեմենտը և այլն: Արտահանման հիմնական շուկաներն են եղել՝ Չինաստանը (22,2%), Հնդկաստանը (9,9%), Թուրքիան (8.4%) և Ճապոնիան (4.5%): Նույն թվականի համար, Իրան ներմուծվող հիմնական ապրանքներն են. արդյունաբերական պարագաները, սննդամթերքն ու այլ սպառողական ապրանքները: Իրանը հիմնականում ներմուծում է ԱՄԷ-ից (39.6%), Չինաստանից (22.4%), Հարավային Կորեայից (4.7%), ու Թուրքիայից (4.6%):

Տարածաշրջանում Իրանի խոշոր առևտրային գործընկերներն են Թուրքմենստանը ու Ադրբեջանը: Երրորդ տեղում է Հայաստանը, որին հաջորդում է Վրաստանը: Տարածաշրջանի բոլոր երկրների հետ Իրանի առևտրի հաշվեկշիռն ունի դրական սալդո, ինչը վկայում է, որ այդ երկրների ինտեգրումը ԻԻՀ հետ շատ ավելի հեշտ է: Իրանը Հայաստան է հիմնականում

արտահանում վառելիք, պլաստմասե իրեր ու կաուչուկ, Ադրբեջան՝ օգտակար հանածոներ, քիմիկատներ, պլաստմասե իրեր ու կաուչուկ, Վրաստան՝ քար, ապակի, պլաստմասե իրեր ու կաուչուկ, իսկ Թուրքմենստան՝ սննդամթերք, առողջապահական սարքավորումներ, ավտոմեքենաներ և առաջադեմ տեխնոլոգիական ապրանքներ:

Համաշխարհային տնտեսությունում Իրանի ԲՀԱ ցուցանիշի հաշվարկի արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում: Ինչպես վկայում են հաշվարկները, Իրանն ունի առավելություն հիմնականում վառելիքի արտադրության ոլորտում: 2005թ. հահեմատ, ԻԻՀ բարելավել է իր առավելությունը մի շարք ոլորտներում, մասնավորապես, հանքա-արդյունաբերության ու պլաստմասե իրերի ու կաուչուկի արտադրությունում:

Աղյուսակ 1

ԻԻՀ ԲՀԱ ցուցանիշը

Ապրանքախումբ	2015	2005
06-15 Բանջարեղեն	0.79	1.15
25-26 Հանքահումք	0.87	0.58
27 Նավթ և գազ	4.42	7.15

Աղբյուրը՝ հաշվարկվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով UN COMTRADE վիճակագրական մի շարք տվյալները:

ԻԻՀ ՄԱԻ ցուցանիշի հաշվարկման արդյունքում բացահատվել է, որ այս ցուցանիշը բարձր է գրեթե բոլոր ապրանքների կտրվածքով քննարկվող բոլոր երկրների համեմատ. Հայաստանի հետ ամենաբարձր ցուցանիշը 41-49 ապրանքախմբերի համար է, Ադրբեջանի՝ 64-67, Վրաստանի՝ 68-71 և Թուրքմենստանի հետ՝ 44-67 ապրանքախմբերի համար:

Անդրադառնալով, ԻԻՀ-Հայաստան հարաբերություններին, փաստենք, որ դրա հիմքում ընկած է էներգետիկայի ոլորտը: Այսօր պաշտոնական մակարդակով այս երկրների կառավարությունները ստորագրել են անհրաժեշտ գրեթե բոլոր փաստաթղթերն արդյունավետ համագործակցության համար, որոնք ընդգրկում են տնտեսական, գիտատեխնիկական, տրանսպորտային, ստանդարտավորման, առևտրի և այլ ոլորտներ: Այնուամենայնիվ, ԻԻՀ ներմուծումը մնում է բավական փակ ՀՀ արտադրված ապրանքների (իհարկե ոչ միայն Հայաստանի) համար: Համանման փաստաթղթեր ԻԻՀ ստորագրել է նաև Ադրբեջանի, Թուրքմենստանի ու Վրաստանի հետ:

ԻԻՀ արտաքին առևտրի միտումները, ընդհանուր առմամբ, դրական են բոլոր չորս երկրների հետ (տես աղյուսակ 1), սակայն դրանք դեռևս կայուն չեն՝ պայմանավորված մի շարք տնտեսական և քաղաքական արտաքին ու ներքին համաշխարհային և տարածաշրջանային անկայուն գործոններով:

Քննարկելով յուրաքանչյուր երկրի բնական պաշարները, փաստենք, որ Հայաստանն ու Վրաստանը հարուստ չեն բնական ռեսուրսներով, իսկ Ադրբեջանն, Իրանը և Թուրքմենստանը հարուստ են նավթի ու բնական գազի պաշարներով: Չնայած Հայաստանը հարուստ չէ բնական ռեսուրսներով, սակայն այն տարածաշրջանում առաջատար է բարձր տեխնոլոգիաների առումով՝ մեկ շնչի հաշվարկով: Այդ են փաստում նաև միջազգային գնահատումները: Մասնավորապես, ըստ Նորարարության գլոբալ ինդեքսի, Հայաստանը գլխավորում է հինգ երկրներին. Հայաստանը զբաղեցնում է 65 տեղը, այնինչ Վրաստանը՝ 75, Ադրբեջանը՝ 101, իսկ Իրանը՝ 120 (Թուրքմենստանի մասին տվյալները բացակայում են)[6]: Այդ իսկ պատճառով, Հայաստանի դեպքում ծրագրավորման ոլորտը աշխատանքում կդիտարկվի բացահայտ համեմատական առավել ոլորտ՝ տարածաշրջանի մյուս երկրների համեմատ:

Անդրադառնալով Հայաստանի տնտեսությանը, հարկ է նշել, որ Հայաստանը տարածաշրջանի ամենափոքր տնտեսությունն է՝ չունենալով ելք դեպի ծով: Ըստ www.cia.gov աղբյուրի, վերջինիս ՀՆԱ-ն ունի հետևյալ կառուցվածքը. գյուղատնտեսություն՝ 19.6%, արդյունաբերություն՝ 29.1% և ծառայություններ՝ 51.3%:

Արդյունաբերության հիմնական ճյուղերն են. հանքարդյունաբերությունը, ադամանդագործությունը, էլեկտրական շարժիչների, հագուստի ու կոշիկի արտադրությունը, ոսկերչությունը, ծրագրային ապահովումը, սննդի վերամշակման, խմիչքների արտադրությունը: Գյուղատնտեսության հիմնական ճյուղերն են մրգի ու բանջարեղենի արտադրությունը և անասնաբուծությունը: Հիմնական արտահանվող ապրանքներն են՝ երկաթաքարը, անմշակ պղինձը, գունավոր մետաղները, հանքային այլ արտադրանքը, ադամանդները, սննդամթերքն ու էլեկտրահոսանքը: 2016թ. արտահանման հիմնական շուկաներն են եղել՝ Ռուսաստանը՝ 20.8% (16.5%՝ 2015թ.), Չինաստանը՝ 5.4% (11.1%՝ 2015թ.), Գերմանիան՝ 7,9% (9,4%՝ 2015թ.), Իրաքը՝ 7,7% (8.8%՝ 2015թ.), Վրաստանը՝ 8,2% (8,4%՝ 2015թ.), Կանադան՝ 7.8% (7.3%՝ 2015թ.), Բուլղարիան՝ 8.5% (5,3%՝ 2015թ.), իսկ Իրանը՝ 4,2% (5.5%՝ 2015թ.)[7]:

Հայաստան ներմուծվող հիմնական արտադրանքներն են՝ բնական գազ/նավթ, ծխախոտ, սննդամթերք, ադամանդ, դեղեր, տրանսպորտային միջոցներ և այլն: 2016թ. Հայաստանը հիմնականում ներմուծել է. Ռուսաստանից - 30.3% (29,1%՝ 2015թ.), Չինաստանից - 10.9% (9,7%՝ 2015թ.), Գերմանիայից 5.7% (6,2%՝ 2015թ.), Իրանից - 5% (6.1%՝ 2015թ.), Իտալիայից -

---

[6] Աղբյուրը՝ https://innovationindex.org/content.aspx?page=data-analysis

[7] ՀՀ սոցիալ տնտեսական վիճակագրություն, Երևան 2015, էջ 114-117 https://www.armstat.am/am/?nid=82&id=1742,

3.9% (4,6%՝ 2015թ.), և Թուրքիայից - 5% (4,2%՝ 2015թ.)[8]: Փաստենք, որ ԻԻՀ անկախացումից հետո Հայաստանը 5 հիմնական առևտրային գործընկերներից մեկն է: Հայաստանը և Ադրբեջանը չունեն տնտեսական ու դիվանագիտական հարաբերություններ: Հայաստանի համար աշխատանքում ՄԱԻ հաշվարկումը ցույց տվեց, որ այն բարձր է Վրաստանի հետ՝ գրեթե բոլոր ապրանքների կտվածքով, մասամբ՝ Իրանի հետ, Թուրքմենստանի հետ բարձր է միայն մեկ-երկու ապրանքների կտրվածքով, իսկ Ադրբեջանի դեպքում՝ այն երկստեք զրոյական է:

Հայաստանի ԲՀԱ ցուցանիշի հաշվարկման վերջնական արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում: Ինչպես փաստում է աղյուսակը, Հայաստանն ունի առավելություն հիմնականում հանքահումքային արդյունահանման, հագուստի ու կոշիկի, քարի/ապակու և սննդամթերքի ատադրության մեջ (մասնավորապես՝ խմիչքների): 2005թ. համեմատ, Հայաստանը բարելավել է իր առավելությունը մի շարք ոլորտներում, մասնավորապես բանջարեղենի, մսամթերքի, կաշվի, հագուստի ու կոշիկի արտադրության մեջ:

Աղյուսակ 2

Հայաստանի ԲՀԱ ցուցանիշը

Ապրանքախումբ	ԲՀԱ 2015	ԲՀԱ 2010
01-05 Միս, Մսամթերք	1.6	0.58
06-15 Բանջարեղեն	0.72	0.51
16-24 Սննդամթերք	6.41	4.45
25-26 Հանքահումք	21.43	15.78
41-43 Անմշակ կաշի, երեսվածքներ, կաշի և մորթի	0.61	0.24
44-49 Փայտ և փայտյա իրեր	0.09	0.06
50-63 Տեքստիլ արտադրանք	1.21	0.15
64-67 Կոշիկ և գլխարկներ	0.1	0.19
68-71 Քար և ապակի	3	3.92
72-83 Մետաղ	2.33	4.51

Աղբյուրը՝ հաշվարկվել է հեղինակի կողմից, հիմք ընդունելով UN COMTRADE վիճակագրական տվյալները

[8] Տե՛ս վերևը:

Ըստ Կենտրոնական հետախոզության գործակալության, Ադրբեջանի ՀՆԱ-ի հիմնական մասը կազմում է արդյունաբերությունը՝ մոտ 61.1%, որտեղ հիմնական բաժինը ընկնում է նավթի ու գազի արդյունահանմանը: Գյուղատնտեսությունը կազմում է ՀՆԱ-ի 6.4%, չնայած, որ Ադրբեջանի տարածքների 54,9% ունեն գյուղատնտեսական նշանակություն: ՀՆԱ 32.5% բաժին է ընկնում ծառայությունների ոլորտին:

2015 թ. Ադրբեջանի հիմնական արտահանման գործընկեր-երկրներն են եղել՝ Իտալիան (26,3%), Գերմանիան (13.3), Ինդոնեզիան (7), Ֆրանսիան (6,9), և Չեխիան (6%), իսկ արտահանման հիմնական ապրանքներն են՝ նավթը և գազը (արտահանման 90%), սննդամթերքը ու բամբակը: Արդբեջանի ներմուծման հիմնական գործընկերներն են՝ Ռուսաստանը (19,9%), Թուրքիան (16,5), Մեծ Բրիտանիան (8,6), Գերմանիան (6.6), Իտալիան (6.3), և ԱՄՆ (4.1%), իսկ ներմուծվել է հիմնականում մեքենաներ ու սարքավորումներ, սննդամթերք, մետաղներ ու քիմիկատներ:

Ադրբեջանից Իրան արտահանվող հիմնական արտադրանքներն են փայտը, սննդամթերքը, բամբակը ու երկաթաքարը, իսկ ներմուծվող՝ հանքահումքայինը, հագուստը, պլաստմասը ու կաուչուկը: 2015թ. Ադրբեջանի արտահանումն իրանական շուկա կազմել է 139 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը Իրանից նույն ժամանակահատվածի համար՝ 90 մլն ԱՄՆ դոլար, հիմք ընդունելով նույն գրասենյակի վիճակագրական տվյալները:

ԲՀԱ ցուցանիշի հաշվարկը ցույց տվեց, որ այս երկիրն առավելություն ունի միայն նավթի ու գազի արդյունահանման մեջ (ԲՀԱ հավասար է 8.89), միայն մի փոքր բարելավելով բանջարեղենի արտադրության դիրքը 2015թ. համեմատած 2010թ. հետ:

Աշխատանքում Ադրբեջանի ՄԱԻ հաշվարկը փաստում է, որ այն բարձր է բոլոր ապրանքների կտրվածքով Վրաստանի, որոշակի առումով Թուրքմենստանի հետ, սակայն Իրանի հետ այն միայն մեկ-երկու ապրանքների կտրվածքով:

Վրաստանը տարածաշրջանի միակ երկիրն է, որտեղ ծառայության ոլորտը կազմում է ՀՆԱ-ի 68.3% պայմանավորված տրանսպորտային ու զբոսաշրջության ոլորտներով հիմնք ընդունելով Կենտրոնական հետախոզական գրասենյակի տվյալները: Վրաստանը տարանցիկ երկիր է և Հայաստանի, և Ադրբեջանի, և թե ԻԻՀ համար: Վրաստանի տնտեսության մեջ արդյունաբերությունը կազմում է ՀՆԱ-ի 21.6%, իսկ գյուղատնտեսությունը՝ 9.2%: Արդյունաբերության խոշոր հատվածներ են՝ պողպատի ձուլումը, էլեկտրական տեխնիկայի արտադրությունը, հանքարդյունաբերությունը (մանգան, պղինձ, ոսկի), քիմիկատների, փայտամշակման և գինու

արտադրությունը: Գյուղատնտեսության հիմնական արտադրանքներն են՝ ցիտրուսային մրգերը, խաղողը, թեյը, պնդուկը, բանջարեղենը ու մսամթերքը:

Ըստ նույն վիճակագրական աղբյուրի, 2015թ.-ին Վրաստանի հիմնական արտահանման գործընկերները են եղել՝ Ադրբեջանը (10,9%), Բուլղարիան (9.7%), Թուրքիան (8.4%), Հայաստանը (8.2%), Ռուսաստանը (7.4%), Չինաստանը (5.7%), ԱՄՆ (4.7%), ու Ուզբեկստանը (4,4%), իսկ խոշոր ներկրողներից են՝ Թուրքիան (17.2%), Ռուսաստանը (8.1%), Չինաստանը (7.6%), Ադրբեջանը (7), Իռլանդիան (5.9%), Ուկրաինան (5.9%) ու Գերմանիան (5,6%): Արտահանման հիմնական արտադրանք են եղել՝ ավտոմեքենաները (վերաարտահանում), ֆեռոհամաձուլվածքները, պարարտանյութերը, ընկույզը, մետաղի ջարդոնը, ոսկին ու պղնձի հանքաքարերը: Ներմուծման մեջ գերակշռել են վառելիքը, տրանսպորտային միջոցները, սարքավորումներն ու մասերը, հացահատիկը և դեղամիջոցները: ԻԻՀ հետ առևտրաշրջանառությունը բավական փոքր է. 2015թ-ին ներմուծումը կազմել է 94, արտահանումը՝ 13 մլն ԱՄՆ դոլար: Հիմնական արտահանվող ապրանքներն են եղել փայտ, պլաստմասսա, կաուչուկ, սննդամթերք ու մետաղներ, իսկ ներմուծվող՝ վառելիք, քար/ապակի, պլաստմաս, կաուչուկ և այլն:

Վրաստանի ԲՀԱ ցուցանիշի հաշվարկը փաստում է, որ այս երկիրն ունի առավելություն հետևյալ ապրանքների արտադրության մեջ. բանջարեղեն, պարենային ապրանքներ, հանքային, քիմիկատներ, մետաղներ և տրանսպորտային միջոցներ (տե՛ս աղյուսակ 3): Սակայն հաշվի առնելով, որ տանսպորտային միջոցների համար Վրաստանը սոսկ տարանցիկ երկիր է տարածաշրջանի համար, ուստի այս ապրանքի կտրվածքով առավելությունը սոսկ բացարձակ թվային է ու չի արտացոլում արտադրական հնարավորությունները: Վրաստանն ունի նաև առավելություն տրանսպորտային ծառայությունների ու զբոսաշրջության ոլորտներում, հիմք ընդունելով դրա բարենպաստ աշխարհագրական դիրքը:

Վրաստանի ՄԱԻ բարձր է Հայաստանի հետ գրեթե ողջ ապրանքների կտրվածքով, որին հաջորդում է Ադրբեջանը, ԻԻՀ և վերջի տեղում է Թուրքմենստանը:

Աղյուսակ 3

Վրաստանի ԲՀԱ ցուցանիշը

Ապրանքախումբ	ԲՀԱ 2015	ԲՀԱ 2010
01-05 Միս, Մսամթերք	1.23	1.17
06-15 Բանջարեղեն	3.36	2.4

16-24 Սննդամթերք	4.45	3.66
25-26 Հանքահումք	10.81	3.8
28-38 Քիմիական նյութեր և հարակից ապրանքներ	1.58	0.89
50-63 Տեքստիլ արտադրանք	0.91	0.43
68-71 Քար և ապակի	0.80	1.64
72-83 Մետաղ	2.00	4.2
86-89 Տրանսպորտային միջոցներ	0.98	1.99

Աղբյուրը՝ հաշվարկվել է հեղինակի կողմից, հիմք ընդունելով UN COMTRADE վիճակագրական տվյալները:

Թուրքմենստանն այն երկրներից է, որի համար վիճակագրական տվյալներ ձեռք բերելը բավական դժվար է: Նույնիսկ այս երկրի վիճակագրական ազգային ծառայությունը տրամադրում է բավական սուղ տվյալներ: Այս իսկ պատճառով այս երկրի հետ կապված հաշվարկները կատարվել են, օգտագործելով Թուրքմենստանի հետ կապված այլ երկրների վիճակագրական տվյալները: Համապատասխան www.cia.org վեբ-կայքի, Թուրքմենստանի ՀՆԱ-ն ունի հետևյալ կառուցվածքը (%). գյուղատնտեսություն՝ 13.1, արդյունաբերություն՝ 47.7 և ծառայություններ՝ 39.2, որտեղ արդյունաբերության հիմքը բնական գազն ու նավթն է և բամբակի վերամշակումը, իսկ գյուղատնտեսության՝ ցորենի, բամբակի, սեխի մշակումը և անասնաբուծությունը: Թուրքմենստանի հիմնական արտահանման շուկան Չինաստանն է, որի մասնաբաժինը կազմում է երկրի արտահանման մոտ 70% (հիմնականում՝ բնական գազը), իսկ մյուս երկիրը՝ Թուրքիան է: Արտահանման հիմնական ապրանքներն են՝ բնական գազն ու նավթը (վերջի տասնամյակում կազմել է երկրի արտահանման ավելի քան 90 տոկոսը), տեքստիլ արտադրանքը և բամբակը: Ըստ վերոնշյալ վիճակագրական աղբյուրի, 2015թ.-ին Թուրքմենստանը հիմնականում ներմուծում է մեքենաներ ու սարքավորումներ, քիմիական արտադրանք ու սննդամթերք, իսկ ներմուծման հիմնական գործընկեր երկրներն են եղել. Թուրքիան (24,9%), Ռուսաստանը (12,3%), Չինաստանը (10.9%), ԱՄԷ (9.1%), Ղազախստանը (5,1%), Գերմանիան (4.6%) և Իրանը (4.4%):

Հիմք ընդունելով Թուրքմենստանի արտահանման և հարևան երկրների հետ առևտրային հարաբերությունների վիճակագրական տվյալները, կարելի է վստահաբար եզրահանգել, որ Թուրքմենստանը ԲՀԱ ունի բնական գազի ու տեքստիլի արտադրության մեջ: Ըստ աշխատանքում իրականացված հաշվարկի, ՄԱՀ-ին բարձր է ԻԻՀ հետ, որին հաջորդում են Ադրբեջանը, Վրաստանը և Հայաստանը:

Ինչպես ԻԻՀ, Թուրքմենստանում էլ հիմնական ներդրողը պետությունն է: Ներկայումս Թուրքմենստանն ունի Հայաստանի, Վրաստանի ու ԻԻՀ հետ «Փոխադարձ ներդրումների» համաձայնագիր:

Այսպիսով, հիմք ընդունելով ատենախոսության երկրորդ գլխում իրականացված վերլուծությունները, հաշվարկները ու գնահատումները, կարող ենք եզրահանգել, որ բացի Հայաստանից ու Վրաստանից, մնացած երեք երկրներն ունեն ԲՀԱ նավթի ու գազի արդյունահանման մեջ, իսկ ԻԻՀ բավական սերտ առևտրատնտեսական հարաբերություններ ունի բոլոր չորս երկրների հետ: Այսինքն, տարածաշրջանային ինտեգրումն առավել քան հասանելի փաստ է: Սակայն դա պետք է կատարվի փուլերով, սկսելով մեկ երկրից, որն առավել չի հակասում ԻԻՀ տնտեսական ու քաղաքական շահերին թե՛ տարածաշրջանում, և թե՛ համաշխարհային շուկայում, իսկ արդյունավետ իրականացման դեպքում՝ փորձը պետք է տարածել մյուս տարածաշրջանային երկրների վրա: Այդ նպատակով, աշխատանքում հաշվարկվել է նաև, թե ինչ ազդեցություն կունենա հավանական ինտեգրումն ընտրված երկրների տնտեսությունների վրա մասնակի հավասարակշռության մոդելով (SMART), որի արդյունքում պարզ դարձավ, որ առաջարկվող տնտեսական ինտեգրումից առավել շահող դիրքերում կհայտնվի Ադրբեջանը, որտեղ կենսամակարդակի բարձացում կնկատվի արտահանվող/ներմուծվող ավելի քան 64 ապրանքի կտրվածքով: Ադրբեջանին հաջորդում է ԻԻՀ, որտեղ ապրանքները 45 են: ԻԻՀ հաջորդում է Հայաստանը 41 ապրանքախմբով: Առավել քիչ կշահեն կենսամակարդակի առումով Թուրքմենստանը և Վրաստանը՝ ոչ ավելի քան 26 ապրանքախումբ: Բոլոր երկրները գրանցում են եկամտի նվազում, քանի որ մաքսատուրքներն իջեցվել են տարածաշրջանային առևտրի համար: Առևտրային ազդեցության գործակիցը նույնպես դրական է: Գրանցվել է որոշ ապրանքների գծով առևտրի վատթարացման ազդեցություն մի շարք երկրների հետ, սակայն դրական ազդեցություն՝ միմյանց միջև:

Ատենախոսության երրորդ՝ «**ԻԻՀ-ի տնտեսական ինտեգրման հեռանկարը հյուսիսային հարևան երկրների հետ**» գլխում, ամփոփելով նախորդ երկու գլուխներում տեսական հիմքերի և կիրառական փորձի վերլուծության արդյունքներն ու կատարված հաշվարկները, նախանշվել են ԻԻՀ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման հավանական ուղղությունները:

Ներկայումս, ԻԻՀ, տնտեսական ինտեգրման համար, ունի երկու հիմնական սցենար ՝

ա. Տնտեսական ինտեգրման «անհատական սցենար», երբ ԻԻՀ տնտեսական ինտեգրման քաղաքականությունն իրականացնում է տարածաշրջանի երկրների հետ յուրաքանչյուրի հետ առանձին, և

բ. Տնտեսական ինտեգրման «միասնական սցենար», որն ենթադրում է ստեղծել թիրախավորված երկրների շրջանակում մաքսային միություն:

Իհարկե, հասկանալի է, որ երկրորդ սցենարն դժվար իրագործելի է, հատկապես, տարածաշրջանի ու համաշխարհային աշխարհաքաղաքական ներկա իրավիճակում, սակայն իրատեսական է:

Երկու սցենարի դեպքում էլ ԻԻՀ պետք է հստակեցնի իր դերը տարածաշրջանում և համաշխարհային միջավայրում, որի հիման վրա պետք է մշակվեն համապատասխան քաղաքականություն ու իրականացվեն բոլոր անհրաժեշտ քայլերը: ԻԻՀ դերը կարելի է խմբավորել ըստ հետևյալ նպատակների.

- ✓ **Թողնել ամեն ինչ իր տեղում՝ առանց փոփոխության և գործել ըստ ժամանակի պահանջի:**
- ✓ **Վերածվել խոշոր ռազմական դերակատարներից մեկը համաշխարհային միջավայրում**
- ✓ **Վերածվել մի երկրի, որն ունի զարգացած և ուժեղ տնտեսություն, որի համար բոլոր ռեսուրսային նախադրյալներն առկա են:**

ԻԻՀ կառավարության կողմից տնտեսական առաջնորդի դերի ընտրության դեպքում, անհրաժեշտ են տնտեսության ազատականացման մի շարք անհապաղ քայլեր՝ արտաքին առևտրի շեշտադրմամբ: Այն պետք է իրականացնել քայլ առ քայլ՝ ընտրելով տարածաշրջանում ԻԻՀ տնտեսությանն առավել ինտեգրված երկիր, պիլոտային մոտեցման համար, որը հնարավորություն կտա տեսանելի դարձնել սխալներն ու դրանք ուղղել ինտեգրման հետագա ընդլայնմանն ուղղված քայլերի համար: Հաշվի առնելով վերոնշյալ գնահատումները, որոնք վկայում են, որ Հայաստանը տնտեսության գործունեության գրեթե բոլոր ոլորտներում չի կարող լինել մրցակից երկիր Իրանի համար, թե տարածաշրջանում, և թե համաշխարհային շուկայում, ապա տնտեսական ինտեգրման «պիլոտային» ծրագիրը նպատակային է սկսել Հայաստանի հետ՝ հիմք ընդունելով սխեմա 1 նշված հերթականությունը, որոնք են. ինտեգրման բուն նպատակի հստակեցում, ներկայիս միջազգային փորձի գնահատում, արդյունքների տեղայնացում ԻԻՀ և տարածաշրջանային երկրների վրա՝ պարբերաբար բարելավելով ռազմավարությունը: Այնուամենայնիվ, առավել արդյունավետ ինտեգրման պայման մնում է տնտեսության ազատականացումը, քանի որ որքան երկրի տնտեսությունը ազատ է, այնքան շատ ապրանքախմբերում երկիրն ունի ԲՀԱ համաշխարհային շուկայում:



Սխեմա 1. ԻԻՀ տնտեսական ինտեգրման սխեմա

Ավելին տնտեսական ինտեգրման հիմքում պետք է ընկած լինի քլասթերային մոտեցումը, այսինքն՝ հաշվի են առնվելու յուրաքանչյուր երկրի առավելությունները, որի հիման վրա էլ կկազմակերպվեն արտադրական գործընթացներ յուրաքանչյուր երկրում տարածաշրջանի ռեսուրսների առավելագույն արդյունավետ օգտագործման նպատակով:

Քլասթերային մոտեցման հիմքում պետք է ընկած լինի, ինչպես արդեն եզրահանգել ենք վերլուծությունների ու գնահատումների արդյունքում, յուրաքանչյուր երկրի, ատենախոսությունում հաշվարկված, ԲՀԱ-ները, որոնք համափարպակ ներկայացված են մատրիցա 1–ում: Մատրիցան հստակ ցույց են տալիս, թե տարածաշրջանային երկրները որ ոլորտում/ոլորտներում ունեն արտադրական մրցակցային հնարավորություն (այն ամփոփվել է

ատենախոսությունում թիրախավորած երկրների համար հաշվարկված ԲԱՑ, որտեղ ցուցանիշը մեծ է 1-ից (տե՛ս էջեր 8, 11, 13, 14, 15 և 16:)):

Ապրանքախումբ	Հայ.-ն	Ադր.-ն	Վր.-ն	ԻԻՀ	Թուրք.-ն
01-05 Միս, Մսամթերք	1.6		1.23		
06-15 Բանջարեղեն			3.36		
16-24 Սննդամթերք	6.41		4.45		
25-26 Հանքահումք	21.43		10.81		
27 Նավթ և գազ		8.89		4.42	8.64
28-38 Քիմիական նյութեր և հարակից ապրանքներ			1.58		
50-63 Տեքստիլ արտադրանք	1.21				2.63
68-71 Քար և ապակի	3				
72-83 Մետաղ	2.33		2		
86-89 Տրանսպորտային միջոցներ					

Մատրիցա 1. ԲՀԱ տարածաշրջանային համագործակցության համար[9]

Աղբյուրը՝ հաշվարկվել է հեղինակի կողմից հիմք, ընդունելով UN COMTRADE վիճակագրական տվյալները:

Այսպիսով, մատրիցան հստակ ցույց է տալիս, որ քլասթերային համագործակցության փայլուն մոդել կարող է դառնալ տեքստիլի ու հագուստի ոլորտը: Այսպես, ԻԻՀ ու Թուրքմենստանը հարուստ են բամբակով, մասամբ՝ մետաքսով ու բրդով: Այս հումքի վերամշակումը կարելի է կազմակերպել հենց այս երկու երկրներում, քանի որ արդեն քիչ թե շատ իրենք նաև ունեն համապատասխան արտադրական հնարավորություններ, այնինչ Հայաստանն ու Վրաստանն ունեն առավելություն հագուստի արտադրության մեջ: Ավելին, այս երկու երկրները ԵՄ շուկա ազատ մուտք գործելու հնարավորություն ունեն՝ GSP+ համակարգով:

Մեկ այլ ոլորտ է զբոսաշրջությունը, որտեղ երկրները կարող են երրորդ երկրի զբոսաշրջիկին առաջարկել շրջագայության փաթեթներ՝ իրար հաջորդելով իսլամական ու քրիստոնեական մշակույթները:

[9] Որքան ցուցանիշը մեծ է 1-ից, այնքան մեծ է տվյալ երկրի համեմատական առավելությունը համեմատած մյուս երկրների:

Եվս մեկ փաստ, որ քլասթերային համագործակցությունն առավել արդյունավետ է տարածաշրջանային ինտեգրման դեպքում, դա գրեթե բոլոր հիմնական ռեսուրսների առկայությունն է տարածաշրջանում: Միակ ռեսուրսը, որ սուղ է տարածաշրջանում, դա՝ հացահատիկն է:

Այսպիսով, հիմք ընդունելով մատրիցա 1-ի հաշվարկները, կարող ենք առաջարկել, որ հյուսիսային հարևան-երկրների հետ ԻԻՀ համագործակցության նախնական հիմնական ոլորտներն են.

- Հայաստան՝ սննդամթերքի արտադրություն և վերամշակում, տեքստիլի մշակումը ու հագուստի արտադրություն, կաշվի մշակում և կաշվե իրերի արտադրություն, ծրագրավորման ոլորտ, զբոսաշրջություն:
- Ադրբեջան՝ սննդամթերքի մշակում և արտադրություն, համեմունքների ու դեղաբույսերի մշակում և արտադրություն, զբոսաշրջության ոլորտ, նավթի ու գազի արդյունահանում և վերամշակում:
- Վրաստան՝ տեքստիլի մշակում և հագուստի արտադրություն, հանքաարդյունաբերություն, սննդամթերքի մշակում և արտադրություն, զբոսաշրջության ոլորտ, համեմունքների ու դեղաբույսերի մշակում:
- Թուրքմենստան՝ տեքստիլի մշակում, զբոսաշրջության ոլորտ, նավթի ու գազի արդյունահանում և վերամշակում:

Կատարված հետազոտության հիման վրա հեղինակն ատենախոսությունում հանգել է հետևյալ հիմնական եզրակացությունների և առաջարկությունների.

- ԻԻՀ ունի բոլոր նախադրյալները համաշխարհային տնտեսությունում վերածվելու 9-րդ գերտերության (ԱՄՆ-ից, Գերմանիայից, Իտալիայից, Կանադայից, Ճապոնիայից, Մեծ Բրիտանիայից և Ռուսաստանից հետո), ոչ միայն առկա էներգետիկ ռեսուրսների, այլև՝ տնտեսական հավանական աճի առկա ներուժով:
- ԻԻՀ տարածաշրջանում տնտեսական առաջնորդի դերի հաստատման դեպքում, այն կարող է դառնալ խաղաղության գրավական՝ նախ առևտրային, ապա՝ տնտեսական ու քաղաքական միջնորդի դեր ապահովելով Հայաստանի ու Ադրբեջանի միջև երկարաժամկետ հատվածում, ինչն այս պահին իրականացնում է Ռուսաստանը:
- ԻԻՀ և հյուսիսային սահմանակից հարևան երկրների միջև հիմնական հավանական տնտեսական շահերը կարող են լինել.

- ԻԻՀ – Հայաստան: ԻԻՀ-ն Հայաստանի համար հիանալի այլընտրանքային երկիր է էներգետիկ ռեսուրսների և իրացման շուկայի տեսանկյունից, որը վերջինիս կդարձնի համեմատականորեն անկախ Ռուսաստանից: Հայաստանը ԻԻՀ համար բարեկամ երկիր է դեպի եվրոպական շուկա մուտք գործելու համար: Տնտեսական համագործակցության նախնական հիմնական ոլորտները կարող են հանդիսանալ երկու երկրի ԲՀԱ ոլորտները, մասնավորապես. գյուղատնտեսության, սննդամթերքի, տեքստիլի, հագուստի, կոշիկի, զբոսաշրջության, հանքարդյունաբերության, գազի ու նավթի, խոտաբույսերի և համեմունքների, ինչպես նաև ծրագրավորման ոլորտները: Ավելին, Հայաստանը կարող է հանդիսանալ դարպաս դեպի ԵԱՏՄ ու ԵՄ շուկաներ՝ իրանական այն ապրանքանիշների համար, որոնք կարտադրվեն Հայաստանում իրանական հումքի հիման վրա և կարտահանվեն: Հայաստանն իր ռեսուրսային ու սպառողական շուկայի տեսանկյունից ներկա պահին չի կարող լինել մրցակից իրանական արտադրողների համար: Սակայն հիմք ընդունելով Հայաստանի արտադրական ներուժն ու որոշ ոլորտներում «պատմական (խորհրդային ժամանակների)» մասնագիտացման բարձր աստիճանը, երկիրը «լրացնող» դեր կարող է ունենալ Իրանի տնտեսության համար:
- ԻԻՀ – Ադրբեջան: Անկախացումից հետո ԻԻՀ ու Ադրջեջանի հարաբերությունները բավական սահուն չընթացան: Ավելին, Ադրբեջանն իր էներգետիկ ռեսուրսներով ԻԻՀ համար դիտարկվում է մրցակցային երկիր, հետևաբար ԻԻՀ Ադրբեջանի դեպքում պետք է շատ ավելի զգույշ քաղաքականություն իրականացներ: ԻԻՀ և Ադրբեջանի ներկայիս տնտեսական համագործակցության ոլորտներ պետք է դիտարկվեն գյուղատնտեսությունը, հանքարդյունաբերությունը, տեքստիլը, զբոսաշրջության, խոտաբույսերի և համեմունքների մշակումը:
- ԻԻՀ – Վրաստան: Հակառակ Հայաստանի և Ադրբեջանի, Վրաստանում տնտեսական դերի բարձրացումը շատ ավելի դյուրին է ԻԻՀ համար: Վրաստանը չունի էներգետիկ ռեսուրսներ և այն ներկրում է Ադրբեջանից: Վրաստանի հետ տնտեսական համագործակցության նախնական ոլորտներն են, որոնք հիմնված են երկու երկրի ԲՀԱ ցուցանիշի վրա՝ հանքաարդյունաբերությունը, խոտաբույսերի և համեմունքների արտադրությունը, զբոսաշրջությունը, տրանսպորտի ու էներգետիկ ռեսուրսների ոլորտները:
- ԻԻՀ – Թուրքմենստան: Չնայած այս երկու երկրների միջև քաղաքական հարաբերություններն այնքան էլ բարիադրացիական չեն, այնուամենայնիվ, միավորման դեպքում այս երկրները կարող են

հանդիսանալ բնական գազի գին թելադրող համաշխարհային շուկայում: Ավելին, այս երկրները, միայն արտահանում իրականացնելով Չինաստան, կապահովեն իրենց երկրի անհրաժեշտ եկամուտը: Հետևաբար, ցանկալի կլինի, որ այս երկու երկրները միավորեն իրենց տնտեսական հնարավորությունները ի շահ իրենց երկրի բարեկեցության:

- Աշխատանքում թիրախավորված հինգ երկրներն էլ ԲՀԱ ունեն տնտեսության այն ոլորտներում, որոնք կարող են փոխլրացնել միմյանց՝ արտադրական արժեշղթայի իրար հաջորդող փուլերում, ինչը հնարավորություն կտա տարածաշրջանի ինտեգրման հիմքում դնել քլասթերային մոտեցումը, որն հնարավորություն կտա համաշխարհային շուկայում հանգիստ մրցել Թուրքիայի ու Չինաստանի հետ:

- Տարածաշրջանային ինտեգրման տնտեսական դրական ազդեցության մասին է նաև փաստում աշխատանքում մասնակի հավասարակշռության մոդելով իրականացված գնահատումը:

Արդյունքում, մեր կողմից կատարվել են հետևյալ հիմնական առաջարկությունները.

- Հաշվի առնելով գլոբալացման ու ինտեգրման ներկայիս միտումները և օրինակները և տարածաշրջանի առանձնահատկությունները, առավել նպատակահարմար է, որ ԻԻՀ կառավարությունն անտեսի դասական ինտեգրման մի շարք փուլերը և գործընթացում շեշտադրի ազատ առևտրային համաձայնագրի ստորագրումը յուրաքանչյուր երկրի հետ առանձին: Այն ավելի ճկուն և դյուրին կդարձնի ինտեգրման գործընթացը:
- ԻԻՀ ինտեգրման գործընթացը պետք է հիմնված լինի յուրաքանչյուր երկրի ԲՀԱ ցուցանիշի վրա, ինչը չի ոտնահարում ինտեգրվող երկրների հիմնական շահերը, և խթանում է դրանց արտադրությունը: Այս մոտեցման հիմնական նպատակն է ստեղծել տարածաշրջանային քլասթերներ:
- Արտաքին առևտրային քաղաքականության ազատականացում:
- Տնտեսության ազատականացում ՕՈՒՆ-ի համար, ինչպես նաև վերջինիս խթանումը տարածաշրջանի կտրվածքով՝ հիմք ընդունելով հարևան երկրների ԲՀԱ ցուցանիշները ենթա-ոլորտային կտրվածքով:
- ԻԻՀ իր տարածաշրջանային ռազմավարության հիմքում պետք է դնի տնտեսական առաջնորդությունը, որն այս պահին չի հակասի տարածաշրջանում առկա գերպետությունների քաղաքական շահերը:
- ԻԻՀ կառավարությունը տնտեսական ինտեգրումը պետք է իրականացնի քայլ առ քայլ: Այս դեպքում պիլոտային նախագիծը նպատակահարմար է սկսել Հայաստանի հետ, քանի որ այս երկիրն իրանական արտադրողների համար մրցակցային արտադրական ներուժ չունի,

ավելին՝ լրացնող և տնտեսական խթանող օղակ կարող է դառնալ ԻԻՀ տնտեսության համար, ապահովելով ազատ մուտք ԵԱՏՄ ու ԵՄ շուկաներ:

- Նավթի ու գազի վաճառքից ստացված եկամուտները ԻԻՀ կառավարությունը պետք է ուղղորդի հարևան երկրների հետ տրանսպորտային ենթակառուցվածքների կատարելագործմանը, որը արտաքին առևտրային շրջանառության հզոր նախապայմանն է:
- Ինչպես նաև ազատականացնի/մասնավորեցնի ֆինանսական համակարգը:

Այսպիսով, եթե ԻԻՀ կառավարությունն իրականացնի նպատակային ու շարունակական քաղաքականություն, բավական կարճ ժամանակահատվածում կարող է դուրս մղել Թուրքիային այս տարածաշրջանից թե՛ քաղաքականապես և թե՛ տնտեսապես:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Հոսսեյնի Նավեհ Մ., Իրան – Հայաստան առևտրային կապերը // «Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես, #11 (137), Երևան, 2011, էջ 32-35:
2. Հոսսեյնի Նավեհ Մ., Իրանի և հարևան երկրների առևտրային փոխհարաբերությունները // «Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես, #11 (137), Երևան 2011, էջ 35-38:
3. Թորոսյան Թ., Հոսսեյնի Նավեհ Մ., Ջալաի Ս.Ա., Տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը և դրա հետևանքները տնտեսական աճի ու տնտեսական բարեկեցության // World Applied Sciences Journal, 17 (10), 2012, էջ 1349-1355: (ISSN 1818-4952):
4. Հոսսեյնի Նավեհ Մ., Տնտեսական ինտեգրման ազդեցությունը ԻԻՀ և նրա հյուսիսային հարևան երկրների տնտեսական բարեկեցության վրա // «Մխիթար Գոշ գիտամեթոդական» հանդես, #4-6, Երևան, 2012, էջ 163-169:
5. Թորոսյան Թ., Հոսսեյնի Նավեհ Մ., ԻԻՀ և Հայաստան: Տնտեսական համագործակցության հավանական ներուժը // «Այլընտրանք», #4 (հոկտեմբեր-դեկտեմբեր), Երևան 2016, էջ 319-326:
6. Թորոսյան Թ., Հոսսեյնի Նավեհ Մ., ԻԻՀ արտաքին առևտրային ներուժը // «Այլընտրանք», #1 (հունվար-մարտ), Երևան 2017, էջ 248-251:

МЕХДИ ХОССИНИ НАВЕ

ПРОЦЕССЫ ЭКОНОМИЧЕСКОЙ ИНТЕГРАЦИИ ИСЛАМСКОЙ РЕСПУБЛИКИ ИРАН И СЕВЕРНЫХ СТРАН (РА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.06 – «Международная экономика».

Защита диссертации состоится 16-ого июля, в 14^{00}, на заседании Специализированного совета 008 ВАК РА по экономике, действующего при Российско-Армянском университете. Адрес: 0051, РА, г. Ереван, ул. Овсепа Эмина 123.

РЕЗЮМЕ

Диссертационное исследование посвящено экономической роли и экономической политике Ирана в возможных интеграционных процессах в регионе.

Обьектом исследования являются процессы экономической интеграции в регионе. Предмет исследования экономические отношения Ирана с северными соседними странами.

Целью диссертации разработка возможной альтернативной модели экономической интеграции Исламской Республики Иран с соседними северными странами, которая будет направлена на повышение роли и укрепление экономического положения Ирана в регионе.

Для реализации этой цели в работе были поставлены и решены следующие задачи:

- изучить основные теории экономической интеграции с современной точки зрения, что позволит разработать теоретические основы исследования с использованием локальных подходов;

- оценить наиболее успешные примеры опыта глобальной экономической интеграции, на основе которых будут предложены основные направления экономической интеграции;

- рассчитать коэффициенты явных сравнительных преимуществ стран, изучаемых в рамках работы, на основе которых будут сформированы возможные пути специализации в рамках предлагаемой экономической интеграции,

- оценить эффекты и результаты предлагаемой экономической интеграции с использованием модели частичного равновесия с целью осуществления статистических прогнозов;

- сформулировать несколько возможных подходов к экономической интеграции для оценки роли ИРИ в регионе,

- предложить и сформулировать наилучшие альтернативы для повышения экономической роли ИРИ в процессе региональной интеграции.

В ходе исследования получены результаты теоритической и практической значимости, из которых научную новизну содержат следующие:

1. На основе расчета показателей явных сравнительных преимуществ Азербайджана, Туркменистана, Ирана, Армении и Грузии была разработана матрица экономического сотрудничества, которая показывает взаимовыгодные области специализации целевых стран и создает основу для формирования кластеров на уровне региона.
2. На основе сравнительного, количественного и качественного анализа была предложена схема взаимовыгодной экономической интеграции, в которой изложена последовательность действий правительства ИРИ с целью выполнения роли экономического лидера в регионе.
3. Выявлено влияние формирования системы свободной торговли в регионе на экономики Азербайджана, Туркменистана, Ирана, Армении и Грузии, и предложены основные направления экономического сотрудничества между странами с использованием модели частничного равновесия (SMART-анализ рынка и программное обеспечение для ограничения торговли).

MEHDI HOSSEINY NAVEH

ECONOMIC INTEGRATION PROCESSES OF ISLAMIC REPUBLIC OF IRAN AND NORTHERN COUNTRIES (RA)

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.06 – «International Economics».

The defense of the thesis will take place on 16th of July, $14^{\underline{00}}$, at 008 Council of Economics of SCC RA at Russian-Armenian University: 123 H. Emin str., Yerevan, 0051.

ABSTRACT

The thesis is devoted to the economic role and the required, necessary economic policy of Iran for the possible integration processes in the region.

The object of the thesis research is the economic integration in the region. The subject of the thesis are economic relations of Iran and northern neighboring countries.

The purpose of the thesis is to develop a possible alternative model of economic integration of the Islamic Republic of Iran with neighboring northern countries, which will be aimed at improving and strengthening the economic position of Iran in the region.

To achieve this goal, the following problems have been solved in the work:

- to study the main theories of economic integration from a modern point of view, which will allow to develop theoretical foundations for the subject of research in a localized approach;
- evaluate the most successful examples of economic integration, on the basis of which the main directions and actions of economic integration will be proposed;
- to calculate the revealed comparative advantages indicator of the countries that are the subject of the thesis, with the help of which the paths of specialization within the framework of the proposed economic integration will be possible to suggest,
- to assess the effects and results of the proposed economic integration using a partial balance model;
- to formulate several possible economic integration scenarios to assess the role of Iran in the region,

- to propose and formulate the best alternatives for enhancing the economic role of the Islamic Republic in the process of regional integration.

In the course of the study, results of theoretical, methodological and practical significance where obtained of which the following includes the scientific novelty:

1. Based on the clear relative advantages index of Azerbaijan, Turkmenistan, Iran, Armenia and Georgia, a matrix of economic cooperation was developed, which shows mutually beneficial areas of economic cooperation of the target countries and creates the basis for the formation of regional clusters,
2. On the basis of quantitative, quantitative and qualitative analysis, a scheme of mutually beneficial economic integration was proposed, which outlines the sequence of actions of the Iran's government regarding the role of economic leadership in the region,
3. The influence of the formation of a free trade system in the region on the economies of Azerbaijan, Turkmenistan, Iran, Armenia and Georgia is revealed, and the main directions of economic cooperation between the two countries are proposed using a partial balance model (SMART market analysis and software to restrict trade).